

**«ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»**

**N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/8/1**

ք.Աշտարակ

«07» Սեպտեմբերի 2018 թ.

«Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Թ.Շահվերդյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա.Դավթյանի -ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1, N 1.1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքներ մանկապարտեզների համար(Աշտարակի թիվ 5 «Արաքս Մուրադյանի անվան» Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երկրորդ հարկի ծախսկողմյան հատվածի վերանորոգման աշխատանքների) և ցեռուցման հետ կապված աշխատանքներ(Աշտարակ համայնքի "Արևիկ" մանկապարտեզի, 3-րդ կորպուսի աջ և ձախ հատվածների ցեռուցման համակարգի իրականացման աշխատանքների) (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են «Օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Չափաբաժին 1՝ 2018թ. Հոկտեմբերի 20-ը, Չափաբաժին 2՝ 2018թ. Հոկտեմբերի 20-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ «Օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և՛ վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի Չափաբաժին 1՝ N Ա Հավելվածում, Չափաբաժին 2՝ N Բ Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ՝ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝  
ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,  
բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:  
5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4830000 (չորս միլիոն ութ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, որից 805000 (ութ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 2480000 (երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 413333 (չորս հարյուր տասներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 2350000 (երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 391667 (երեք հարյուր ինսունմեկ հազար վեց հարյուր վաթսույոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա՝ համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության անկախության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի  
համայնքապետարան

ՀՀ Արագածոտնի մարզ

Ք.Աշտարակ, Ն.Աշտարակեցու հրապարակ 7

ՀՎՀՀ՝ 05005705

ՀՀ Ֆինանսների նախարարության

գործառնական վարչություն

Հ/Հ 900442101433

Համայնքի ղեկավար



Թ.Շահվերդյան

### ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ

Ք.Երևան, Կարապետյան փ. 9

ՀՎՀՀ՝ 01277633

«Անելիք բանկ» ՓԲԸ Հավթաշենի մ/6

Հ/Հ 11811006695800

Տնօրեն՝



Ա. Դավթյան

**Շինարարության կազմակերպման նախագծի  
շրջանակներում նախատեսվել է**

Ջանաձայն<<>>ՀՀ Արագածոտնի մարզի, Աշտարակի թիվ 5 <<Արաքս Մուրադյանի անվան>>

Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երկրորդ հարկի ձախակողմյան հատվածի վերանորոգման

նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների, ներկայացնում են

կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի օգտագործվող նյութերի երաշխիքային

նվազագույն ժամկետների սահմանում ըստ նյութերի տեսակի

| ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ  | ԵՐԱՇԽԻՔԱ<br>ՅԻՆ<br>ԺԱՄԿԵՏ |
|---|---------------------------|
| Մետաղապլաստեբլոկով, սպիտակ պրոֆիլներից 60 մմ հաստությամբ, խուլոններ, ներառյալ սարգավորումները | 7 տարի                    |
| Ցեմենտավազե հարթաշերտ H=40 մմ   | 7 տարի                    |
| Հատակների երեսապատում կերամիկական սալերով   | 7 տարի                    |
| Շրիշակների կերամիկական սալերից h-150 մմ   | 7 տարի                    |
| Պատերի նշեպերի բարելավված սվաղ գաջե շաղախով   | 3 տարի                    |
| Պատերի բարելավված սվաղ ցեմենտավազե շաղախով  | 5 տարի                    |
| Պատերի մածկապատում ներկում ջրակայուն ներկով   | 3 տարի                    |
| Պատերի երեսապատում հախճապալիկով   | 5 տարի                    |
| Առաստաղների բարձրորակ սվաղ գաջե շաղախով   | 7 տարի                    |
| Առաստաղների մածկապատում և ներկում ջրակայուն ներկով  | 7 տարի                    |
| Պատուհանների շերտավարագուրների տեղադրում  | 3 տարի                    |
| Մետաղական տարրերի երկշերտյուղաներկում   | 3 տարի                    |
| Ցեմենտավազե հարթաշերտ H=40 մմ   | 7 տարի                    |
| Ազդեցիկների ցածկույթի ներքին մակերևույթի մաքրում և ներկում յուղաներկով                        | 5 տարի                    |
| Պոլիպրոպիլենեխողովակների մոնտաժում Φ15x2,3 մմ   | 7 տարի                    |
| Փական ջրային Φ15 մմ   | 1 տարի                    |
| Լվացարանի ծորակ-խառնիչ  | 1 տարի                    |
| Պոլիպրոպիլենեֆիտի նեղներև ձևավորմաներ   | 3 տարի                    |
| Պոլիվինիլքլորիդե Φ100 մմ խողովակ  | 7 տարի                    |
| Նույնը, Φ50 մմ  | 7 տարի                    |
| Խեցեղուզարանակոնք   | 5 տարի                    |
| Խեցեղվացարանակոնք   | 5 տարի                    |
| Պոլիվինիլքլորիդե անցում Φ100-50 մմ  | 7 տարի                    |

|   |        |
|---|--------|
| ՊոլիվինիլբրոբիդեանկյունակՓ50մմ                                | 7 տարի |
| Նույնը, Փ100մմ  | 7 տարի |
| ՊոլիվինիլբրոբիդեքառաբաշխիկՓ100մմ                              | 7 տարի |
| ՊոլիվինիլբրոբիդեռաբաշխիկՓ50մմ                                 | 7 տարի |
| Նույնը, Փ100մմ  | 7 տարի |
| Պոլիվինիլբրոբիդեստուգիչներ (կանգնակներով) Փ100մմ              | 7 տարի |
| ՀոսակՓ50մմ  | 7 տարի |
| Լուսատուառաստաղի  | 7 տարի |
| Անջատիչմեկստեղանի   | 3 տարի |
| Երկբևեռ վարդակ  | 3 տարի |
| Տուփ վարդակների և անջատիչների                                 | 7 տարի |
| Ջրիբաքիմետաղականհիմնակմախք                                    | 7 տարի |
| Մետաղականտարրերիերկշերտյուղաներկում                           | 3 տարի |
| Ջրիբաքիմոնտաժումպոլիէթիլենային, 1000լ (ուղղանկյունպրիզմայաձև) | 7 տարի |
| 0.5 HP ջրիպոմպ G=35լ/րոպե, H=35մ, N=8մ                        | 3 տարի |
| Խողովակմեկուսացումով, 16x2մմ, նախատեսվածսառըջրիհամար          | 7 տարի |
| Նույնը, Փ32մմ   | 7 տարի |
| Նույնը, Փ20մմ   | 7 տարի |
| Նույնը, Փ15մմ   | 7 տարի |
| ՀետադարձփականՓ32մմ  | 3 տարի |
| ՋրայինփականՓ32մմ  | 3 տարի |
| Նույնը, Փ20մմ   | 3 տարի |
| ԴատարկմանփականՓ25մմ   | 3 տարի |

Պահպանելով արտադրողի կողմից սահմանված նյութերի շահագործման պայմանները երաշխիքային ժամկետում կապալի օբյեկտի ,դրա առանձին մասերի«կոնստրուկցիաներ և այլ» և օգտագործված նյութերի շարքից դուրս գալու դեպքում, շինարարական կազմակերպությունը պարտավոր է վերացնել այդ թերություններըիրմիջոցներով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան»

«Արագածոտնի մարզ»

Ք.Աշտարակ, Ն.Աշտարակեցու հրապարակ 7

Հ/Հ 05005705

«Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն»

Հ/Հ 900442101433

Համայնքի ղեկավար



Թ.Շահվերդյան

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ

Ք.Երևան, Կարապետյան փ. 9

Հ/Հ 01277633

«Անելիք բանկ» ՓԲԸ-Հավթաշենի մ/6

Հ/Հ 11811006695800

Տնօրեն՝



Ա. Դավթյան

**Շինարարության կազմակերպման նախագծի  
շրջանակներում նախատեսվել է**

Համաձայն պայմանագիր <<>> Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի, Աշտարակ համայնքի, "Արևիկ" մանկապարտեզի, 3-րդ կորպուսի աջ և ձախ հատվածների ջեռուցման համակարգի իրականացման աշխատանքներին նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների, ներկայացնում են կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի օգտագործվող նյութերի երաշխիքային նվազագույն ժամկետների սահմանում ըստ նյութերի տեսակի

| ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ  | ԵՐԱՇԽԻՔԱ ՅԻՆ ԺԱՄԿԵՏ |
|---|---------------------|
| Պանելային մարտկոցների PKKP տեղադրում                        | 7 տարի              |
| Պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում                         | 7 տարի              |
| Ֆիտինգներ և ձևավորմասեր                                     | 7 տարի              |
| Փականեր ջերմակարգավորիչ, խցանային, օդահեռացման և դահեռացման | 3 տարի              |
| Լամինաթեսալիկներով ծածկույթ                                 | 3 տարի              |

Պահպանելով արտադրողի կողմից սահմանված նյութերի շահագործման պայմանները երաշխիքային ժամկետում կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի «կոնստրուկցիաներ և այլ» և օգտագործված նյութերի շարքից դուրս գալու դեպքում, շինարարական կազմակերպությունը պարտավոր է վերացնել այդ թերությունները իր միջոցներով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան  
«Արագածոտնի մարզ  
Ք.Աշտարակ, Ն.Աշտարակեցու հրապարակ 7  
ՀՎՀՀ՝ 05005705  
«Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն  
Հ/Հ՝ 900442101433  
Համայնքի ղեկավար  
Թ.Շահվերդյան



**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ  
Ք.Երևան, Կարապետյան փ. 9  
ՀՎՀՀ՝ 01277633  
«Անելիք բանկ» ՓԲԸ <Դավթաշենի մ/ճ  
Հ/Հ՝ 11811006695800

Տնօրեն՝



Ս. Դավթյան

ՀՀ Արագածոտնի մարզի, Աշտարակի թիվ 5 <<Արաքս Մուրադյանի անվան>> Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երկրորդ հարկի ձախակողմյան հատվածի վերանորոգման աշխատանքների

Նախահաշիվ թ. 1-1  
 Համաշինարարական աշխատանքներ

| Զ/Ի հիմնավորում               | Աշխատանքների անվանումը    | Չ//մ  | Քանակը         | Միավորի արժեքը, տուր. |       | Նյութեր     |                   |                   | Միավորի արժեքը, հազ. դրամ |          |             | Արժեքը, հազ. դրամ |        |      |       |                  |
|-------------------------------|---------------------------|---|----------------|-----------------------|-------|-------------|-------------------|-------------------|---------------------------|----------|-------------|-------------------|--------|------|-------|------------------|
|                               |                           |   |                | աշխ.                  | մեք.  | նորմ. ծախս. | նյութ. ընդհ. ծավ. | արժեքը, հազ. դրամ | նյութ                     | աշխատավ. | մեքեն. շահ. | միավ.             | ընդամ. |      |       |                  |
| 1                             | 2                         | 3   | 4              | 5                     | 6     | 7           | 8                 | 9                 | 10                        | 11       | 12          | 13                | 14     | 15   | 16    | 17               |
| <b>1. Քանդման աշխատանքներ</b> |                           |   |                |                       |       |             |                   |                   |                           |          |             |                   |        |      |       |                  |
| 1                             | 23-174                    | Փայտյա դռների քանդում   | մ <sup>2</sup> | 7,56                  | 0,457 | 0,098       |                   |                   |                           |          |             |                   | 0,91   | 0,27 | 1,18  | 8,95             |
| 2                             | 23-166                    | Մետաղյա հատակների քանդում   | մ <sup>2</sup> | 16,31                 | 0,186 | 0,022       |                   |                   |                           |          |             |                   | 0,37   | 0,06 | 0,43  | 7,05             |
| 3                             | 23-169                    | Ցեմենտ/ավազե հարթեցման շերտի քանդում  | մ <sup>2</sup> | 16,31                 | 0,128 | 0,039       |                   |                   |                           |          |             |                   | 0,26   | 0,11 | 0,36  | 5,93             |
| 4                             | 23-77<br>23-228<br>գնաց.3 | Շին. աղբի դուրս բերում շենքից և բարձրում ամեք. ծրագրով, տեղափոխում 5 կմ հեռ. վրա            | տ              | 7,00                  | 0,990 | 0,550       |                   |                   |                           |          |             |                   | 1,98   | 1,52 | 3,50  | 24,47<br>46,40   |
| <b>ԸՆԴՈՒՄՆԵՐ 1</b>            |                           |   |                |                       |       |             |                   |                   |                           |          |             |                   |        |      |       |                  |
| 1                             | Շուկա                     | Մետաղապատե բլոկով, սպիտակ պրոֆիլներից 60մ հաստությամբ, խուլ դռներ, ներառյալ սարգավորումները | մ <sup>2</sup> | 7,56                  | 0,0   | 0,0         | մ/պատե խուլ դուր  | մ <sup>2</sup>    | 1,0                       | 7,56     | 35,00       | 35,00             | 0,00   | 0,00 | 35,00 | 264,60<br>264,60 |
| <b>ԸՆԴՈՒՄՆԵՐ 2</b>            |                           |   |                |                       |       |             |                   |                   |                           |          |             |                   |        |      |       |                  |

| 1                                      | 2                     | 3  | 4              | 5     | 6     | 7     | 8                                  | 9                    | 10             | 11             | 12             | 13           | 14   | 15   | 16   | 17              |
|--|-----------------------|--|----------------|-------|-------|-------|------------------------------------|----------------------|----------------|----------------|----------------|--------------|------|------|------|-----------------|
| <b>14. Հաստիքներ</b>                   |                       |  |                |       |       |       |                                    |                      |                |                |                |              |      |      |      |                 |
| 1                                      | 11-55<br>11-56<br>q=4 | Ցանկատվազե<br>հարթաշերտ H=40մմ                                     | մ <sup>2</sup> | 16,31 | 0,105 | 0,019 | ցեմ. շաղախ<br>կերամիկական<br>սալիկ | մ <sup>3</sup>       | 0,0408         | 0,67           | 26,0           | 1,22         | 0,21 | 0,05 | 1,48 | 24,10           |
| 2                                      | 11-135                | Հաստակների երեսպատում<br>կերամիկական սալերով                       | մ <sup>2</sup> | 16,31 | 0,614 | 0,045 | սոսինձ<br>կերամագրանիտ<br>սալիկ    | կգ                   | 1,02<br>5,0    | 16,64<br>81,55 | 4,528<br>0,118 | 5,29<br>0,68 | 1,23 | 0,12 | 7,32 | 119,38          |
| 3                                      | 15-92                 | Շրիշակներ կերամիկական<br>սալերից h=150մմ                           | մ <sup>2</sup> | 3,20  | 1,25  | 0,02  | սոսինձ                             | կգ                   | 1,03<br>4,2    | 3,30<br>13,44  | 5,556<br>0,118 | 6,56<br>0,57 | 2,50 | 0,06 | 9,68 | 30,97<br>174,46 |
| <b>5. Ներքին հարդարման աշխատանքներ</b> |                       |  |                |       |       |       |                                    |                      |                |                |                |              |      |      |      |                 |
| <b>ԸՆԴՐԱՆՈՒՆԳ 4՝</b>                   |                       |  |                |       |       |       |                                    |                      |                |                |                |              |      |      |      |                 |
| <b>Պատեր</b>                           |                       |  |                |       |       |       |                                    |                      |                |                |                |              |      |      |      |                 |
| 1                                      | 15-246-1              | Պատերի և շեփերի<br>բարելաված սկալ գաջե<br>շաղախով                  | մ <sup>2</sup> | 54,20 | 0,58  | 0,12  | գաջ                                | տ                    | 0,024          | 1,30           | 22,21          | 0,61         |      |      |      |                 |
| 2                                      | 15-262                | Պատերի բարելավված<br>սկալ ցեմենտավազե<br>շաղախով                   | մ <sup>2</sup> |       |       |       | ցեմ. շաղախ                         | մ <sup>3</sup>       | 0,007<br>0,018 | 0,38<br>0,31   | 0,15<br>26,0   | 0,00<br>0,54 | 1,16 | 0,33 | 2,10 | 113,92          |
| 3                                      | 15-664                | Պատերի մածկապատում և<br>ներկում ջրակայուն ներկով                   | մ <sup>2</sup> | 17,1  | 0,464 | 0,068 | մետաղական ցանց<br>ջրակայուն ներկ   | մ <sup>2</sup><br>կգ | 0,053<br>0,63  | 0,91<br>34,15  | 0,422<br>0,383 | 0,03<br>0,28 | 0,93 | 0,19 | 1,68 | 28,67           |
| 4                                      | 15-82                 | Պատերի երեսպատում<br>հախճաասալիկով                                 | մ <sup>2</sup> | 54,20 | 0,397 | 0,01  | ձեփամածիկ<br>հախճաասալիկ           | կգ<br>մ <sup>2</sup> | 0,58<br>1,02   | 31,44<br>17,44 | 0,165<br>3,222 | 0,11<br>3,77 | 0,79 | 0,03 | 1,21 | 65,41           |
| 1                                      | 15-251                | <b>Արաստաղներ</b><br>Արաստաղների<br>բարձրորակ սկալ գաջե<br>շաղախով | մ <sup>2</sup> | 17,1  | 0,947 | 0,02  | սալիկի սոսինձ<br>գաջ               | կգ<br>տ              | 5,0<br>0,0325  | 85,50<br>0,53  | 0,118<br>22,21 | 0,68<br>0,83 | 1,89 | 0,06 | 6,39 | 109,26          |
| 2                                      | 15-665                | Արաստաղների<br>մածկապատում և ներկում<br>ջրակայուն ներկով           | մ <sup>2</sup> | 16,31 | 1,1   | 0,135 | ցուր<br>ջրակայուն ներկ             | մ <sup>3</sup><br>կգ | 0,01<br>0,63   | 0,16<br>10,28  | 0,15<br>0,383  | 0,00<br>0,28 | 2,20 | 0,37 | 3,40 | 55,44           |
